

Չեռագիր մեր Մատ. Թ. 797, 252բ — 253բ (2. 4. 377ա):

2. Գովասանք ի վերայ Թոխաթ քաղաքին.

Գովեմք զԱստուած երեակ անձնի,
Բանն ի Հօրէ ծնեալ զՈրդի.
Բարեբանեմք զսուրբ Հոգի,
Եւ յաւիտեանս յաւիտենի:

Վերջ՝

Ղազար գերի մեղօք դմրած,
Պանդուխտ եղար մէջ Ուռուղաց.
Դու հոգ մ'աներ, Տէրն ողորմած,
Տանի իւր տեղն ամէն ցրուած:
Մեր ննջեցեալքն Թոխաթ հանգած,
Սուրբ Բառամանից թաղըն պառկած.
Մենք ի հեռուստ յետ մընացած,
Հայր մեր յերկինս ասողն օրհնած:

Սկիզբը կայ նախերգանք մը, զոր յառաջ բերինք վերը էջ 574:

Հրատարակուած՝ Իրիս, 1912, էջ 83 — 84:

3. Ողբ ի վերայ Կոտորածին Թոխաթի:

4. Ողբ ի վերայ սովոյն Թոխաթի:

Այս Թ. 3 եւ 4 տաղերը տեսած է Հաւարշ Վ. Սահակեան իրեն սեփական ձեռագիր Տաղարանի մը մէջ (հմմտ. Իրիս, էջ 69). «առաջինը՝ 1602 թուին Թոխաթի մեծ կոտորածին վրայ է. այս ողբը ձեռագրիս մէջ սկզբէն պակաս է քանի մը տուն դժբախտաբար». իսկ երկրորդը՝ «այդ Կոտորածին անմիջապէս յաջորդող Թոխաթի ահաւոր սովին վրայ (1603) է, զոր կը նկարագրէ՝ իբրեւ աղանատես այնքան սրտաճմլիկ եւ այնքան իրապաշտ բացատրութիւններով»: «Կը յուսամ, կը գրէր Սահակեան, որ առիթը կ'ունենամ առաջին երկու ողբերն ալ հանրութեան ներկայացնելու յաջորդաբար», բայց այս չէ յաջողած ողբացեալ յօգուածագրին. իսկ ձեռագիրն հաւանօրէն ոչնչացաւ 1915ի տարագրութեան օրերուն:

5. Ուրիշ տաղեր. «Կը կարծեմ, կը գրէ Սահակեան (անդ), թէ այդ երեք ոտանաւորները¹ չեն ներկայացներ Ղազարի ամբողջական գործը, ինչպէս ենթադրել կու տայ ասոնց իբր վերջաբան գրուած հետեւեալ երկու տուն գրուածը.

1. Կարօտ եմ ձեզ յոյժ փափկալի,
Ի Թոխաթու եւ այլ տեղի.

1. Իմա՝ Թ. 2—4 տաղերը:

Անշահ քեզիս զի քրէյի,
Երգէք ու յիշէք զհաղ փոշի:

2. Ով դք անբան է գէտ ինձ նման,
Ուզէ ասէ զերգս ի լըման.
Ում որ պէտ չէ՝ ունի իւր բան,
Անմեղագիր լինա մարդկան:

Սահակեանի ենթադրութիւնը կը ճշգրէ մեր Թ. 797 Տաղարանը, ուր պահուած է կարգապետ վարդապետի Գովասանքը, բայց թէ Ղազարի «Տետրակն» կը պարունակէր իր գրչէն ուրիշ տաղեր ալ, ես չեմ կրնար հաստատել:

Հ. Ն. ԱՅՈՆԵԱՆ



ՅՈՒՅԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱՅ ՍԱՆՍԱՐԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆԻ

Ի ԿԱՐԻՆ

— (ՀԱՐԱՆԱՅԻՆՆԵՐՆԵՐ)

86.

ՅԱՂԱԳՍ ՄԻՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՌՄՀԲ = 1823:

ԹՈՒՂԹՈՒ 74: — Եջ չէ նշանակուած: — Մեծօրիւն 21 սմ. երկ. 15 սմ. լայն: — Գրողութիւն՝ միասին. 26 տող: — Գիր շնորհագիր: — Նիւթ՝ թուղթ հասարակ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր: — ԿԱՅՄ՝ խաւաքարտ կաշեպատ: — ՆԿՅԱՆԱՏԱՆ՝ շատ տեղ ա տառ գլխոց կարմիր թանաքով: — ԳՐԻՉ՝ Սարգիս: — ՏԵՂԻ՝ Կարեն: — ԹՈՒԱԿԱՆ՝ ՌՄՀԲ = 1823:

Մատենան է վասն միութեան եկեղեցւոյ համառօտ մեկնութիւն կաթողիկէ եկեղեցւոյ սուրբ գրոց եւ սուրբ Հայրապետաց խօսքերէն քաղուած: Ընդօրինակութիւն մըն է, ինչպէս կը տեսնուի առաջին թղթին վրայ գրուած խորագրէն: «Կարճառօտ մեկնութիւն. կաթողիկէ եկեղեցւոյն արտահանեալ յԱստուածաշունչ գրոց եւ բանից սրբոց Հայրապետաց եւ յԱստուածաբան վարդապետաց, Աշխատութեամբ եւ ջանիւք Կոստանդնուպօլսի դպրի միոյ ի գիտապետութեան իմաստնափառ եւ սրբազան աղէքսանդր կաթողիկոսին ինքնագլուխ եւ տիեզերական եպիսկոպոսին ամենայն հայոց. ի թուին հայոց ոմմձ. ի փարիզ քաղաքն Փռանկաց եւ հայոց, Նարդենիս օրինակեալ եղեւ ի քաղաքս Կարին եւ յեկեղեցւոյ պանդոկի վարժարանիս. եւ ձերամբ Սարգիս մանկավարժի. ձեռնասուն աշակերտ խակակիրթ յովակիմիս. յամի Տետր 1820 եւ հայոց ոմմձ ինքն. Փետ. Աին: Ի Կարին:»

ՅԵՇԱՏԱՍԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Էջ 1բ. գրուած է: «A la bibliothèque de la Respect, Ecole Sanassian.

P. Cyrille Capucin Erzeroum, le 18 Juillet 1908.
 En faveur de mon bien cher ami Mr. G. Aboulian
 Dir. de la dite Ecole:,,

87.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԹՈՒՂԹԻՔ 95. ԷՂ չէ նշանակուած: — ՄեծՈւ-
 թիւն՝ 14.5 սմ. երկ. 10 սմ. լայն: — ԳրոՒթիւն
 միասին. 19 տող: — Գիր՝ շնորհակալ: — Նիւթ՝ թուղթ
 հաստ փայլուն: — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ մաքուր, բայց առջեւէն
 պակաս: — ԿԱԶՄ՝ խաւարար տեւ կաշի պատեալ: —
 ՍԿՋԲՆԱՏՈՂ՝ տանց ա տառը կարմիր թանաքով:

Մատենան է գրաբար լեզուա քերա-
 կանութիւն. նախ կը խօսի շեշտերու վրայ,
 յետոյ ձայնաւորաց, անուանց, դերանուններու,
 եւ բայերու վրայ:

88.

ՏՕՆԱՅՈՅՑ

ՈՒԹԻԹ = 1680:

ԹՈՒՂԹԻՔ 181: ԷՂ չէ նշանակուած: — ՄեծՈւ-
 թիւն՝ 10.5 սմ. երկ. 8 սմ. լայն: — ԳրոՒթիւն
 միասին. 15 տող: — Գիր՝ բոլորգիր: — Նիւթ՝ թուղթ
 հաստարակ: — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ՝ գէշ. առջեւէն պակաս եւ
 20 թղթի չափ ծայրէն մկնակեր եղած: — ԿԱԶՄ՝ չունի,
 կողմերը ինկած: — ՍԿՋԲՆԱՏՈՂ, ՍԿՋԲՆԱՏՈՂ տեղ տեղ
 տառը կարմիր: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԳ՝ տեղ տեղ լու-
 սանցքին վրայ զարդ կարմիր: — Գրի՞ մոտիքիս երէց:
 — ՏԵՂ՝ անծանօթ: — ԹՈՒՂԹԻՔ՝ ոճիւթ = 1680:

Մատենան է տօնացոյց, կը ցուցնէ աւուր
 պատշաճի շարականներն եւն:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. վերջին թուղթ
 կիսով պատռած, մնացածին վրայ գրուած է: «...եւ
 երկարան տրու... տօնիցս զոր հաւաք... նի յիշեան
 զամ բոլոր: Ձեռամբ ոգնամու եւ անիմաստ փանաքի.
 սուտ անուան հոգիքիսի որ լոկ անուամբ էրէց կոչի. եւ
 գործովս դատարկ ամ բարեգործութենէ. ի թվականս
 հայոց ու. ծ. իթ: Ի յուլիս ամսամի... պիտան գրիւս
 ազաւթ ով ո՞ք... երամբ որք հանդիպէք ամայ կար-
 դաւով կամ օրինակելով նայ նայ յիշման արժան արարէք
 զանարժան հոգիքիս... եւ զճնոգքս իմ եւ զուսուշո
 իմ. եւ որք յիշէք յիշէ...»

89.

ԲԱՐՍՂԻ ՎԵՑՈՐԵՒՑ ԶԱՌԷ

ԹՈՒՂԹԻՔ 280: — ՄեծՈւթիւն՝ 16.5X11.5X
 3.5X7 սմ.: — ԳրոՒթիւն՝ միասին. 18 տող: — Գիր՝
 բոլորգիր: — Նիւթ՝ մազաղած հաստեղի, կրկնագիր:
 — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ՝ առջեւի թղթերէն ղոսի եզերքը
 մաշած, ներսիները մաքուր. առջեւէն պակաս: —
 ԿԱԶՄ՝ չունի, կողմերը թանաքով միջին երկա-
 սկեզքը երկու տող կարմիր գլուխներու քով լուսանց-
 թագիր: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԳ՝ ղոսի, ծաղիկ, ծաղկաւոր:
 քին վրայ կարմիր զարդ, թռչուն, ծաղիկ, ծաղկաւոր:
 Մատենան է բարձր կէտաբացոյ վեցբիւն
 հաւերը, բայց պակասաւոր: կրկնագիր մատենիս

90.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹՈՒՂԹԻՔ 239: — ՄեծՈւթիւն՝ 14.5X10 սմ.: —
 ԳրոՒթիւն՝ միասին. 15 տող: — Գիր՝ նոսրագիր: —
 Նիւթ՝ թուղթ հաստարակ ողորկ: — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ՝ ոչ
 մաքուր, ետեւի թղթերը ջուր տեսած: — ԿԱԶՄ՝ փայտ
 սեւ կաշի պատեալ, վերջի կողմին կէսը կտրած ին-
 կած: — ՍԿՋԲՆԱՏՈՂ՝ սկզբնատառ, շատ տեղ գլուխ-
 անք տող մը կարմիր թանաքով. շատ տեղ տանց
 առաջին տառը կարմիր:

Մատենան կը բովանդակէ. — 23 թուղթ
 «Պատճէն հայոց տոմարի», Բ. 51 թուղթ «Յաղագս
 կազմութեան մարդոյն» բժշկարան: Գ. 6 թուղթ
 ճաշու շարականաց եւ ալեւուից ցանկ: Դ. 114
 թուղթ «մեկնութիւն ժամագրքին եւ շարականին»,
 Է. 45 թուղթ անողորմաշնական եւ երկրաբա-
 նական բացատրութիւններ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. ԷՂ 70 ա. օտար
 գրէ տպագրի նման գրուած. «ի վայելումս տր յակօրի
 որդի տր կարապետին եւ որդոցն մուրաթին յակօրին
 նախարին անատուրին մաթիսին թուինն նիկողոսին ան
 բարով վայելել տացէ յամէն. խաչելոյն ծոյ անատուր:»

91.

ԺԷ. ԶԱՌԵՐ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒԹԻԹ = 1688:

ԹՈՒՂԹԻՔ 311: — ՄեծՈւթիւն՝ 17X11 սմ.: —
 ԳրոՒթիւն՝ միասին. 22 տող: — Գիր՝ նոսրագիր մաքուր:
 — Նիւթ՝ թուղթ հաստարակ: — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ՝ մաքուր: —
 ԿԱԶՄ՝ փայտ սրճագոյն կաշի պատեալ: — ՍԿՋԲՆԱՏՈՂ
 սկզբնատառ. գլուխներու եւ տանց ա տառը կարմիր
 թանաքով: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԳ՝ քանի մը տեղ լուսանց-
 քին վրայ զունաւոր զարդ. երեք տեղ եւս կէս երես
 զարդ կարմիր: — Գրի՞ Մամուկ դպիր: — ՏԵՂ՝ նոր-
 ջուղս: — ԹՈՒՂԹԻՔ՝ ոճիւթ = 1688:

Մատենան ունի հետեւեալ բովանդակու-
 թիւնը: — Թուղթ Մաթնոսաղայի Սիւնեաց եպիս-
 կոպոսի զոր գրեաց հրամանաւ տեառն խղի հայոց
 կաթողիկոսի: Բ. Թուղթ ստեփանոսի սիւնեաց
 եպիսկոպոսի եւ իմաստասիրի թղթոյն պատասխանի
 զերմանոսի պատրիարքի: Գ. Հարցմունք առ
 երկաբնակ, որ ուրանան զմին քրիստոս աստուած
 մարգարեալ առել: Դ. Թուղթ Պօղոսի տարօնայ
 եպիսկ. Է. Թուղթ միւս Ստեփանոսի սիւնեաց եպի-
 ւ. Գիրք եւ բանք սրբոյն Գրիգորի Տաթեւացոյն:
 Զ. Գիրք սրբոյն Միխայէլի պատրիարքի: Է. Պատ-
 ժութիւն յահանու ոսկեբերանի: Բ. Պատմութիւն
 յահանու մեղիւնեցոյ. Ժ. Վկայութիւնք սուրբ
 յահանու յոյնացի: ԺԲ. ԺԳ. ԺԴ. ԺԵ. նոյնպէս Յովհնու
 ոսկեբերանի ասացեալ ի մեկնութիւնէն աւետարա-
 նին. ԺԶ. Վկայութիւնք յատուածաշունչ բոց եւ
 մարգարէականաց յաղագս գալստեան քրիստոսի:
 ԺԷ. Բարով աւետեաց սուրբ Աստուածածնին:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Թ. 215բ. «Շնորհք ան մերոյ յն քն կամք կարողութիւն հօր եւ սրբոյ հոգոյն աւարտեցաւ գիրքս հակաճառական որ ընդդէմ պիղծ ժողովոյն քաղկեդոնի եւ ամբարշտին լեւոնի եւ փլաբանոսի յետեւողացն նետորի յամի թուահաշուութե տոհմիս հայկական ոճի ի հայրապետուն տն եղիադարու կաթողիկոսի ամ հայոց եւ յառաջնորդուն յայսմ նահանգի քաջ ախոյեանին ուղղափառուն տն ստեփանոսի արքեպիսկոպոսի. եւ անարան վարդապետին որոյ հիմն եւ օժանդակութիւն հաստատեցաւ տպագրատունս ի վանս վեմակնն եւ փառարնակ ամենափրկչին նորջուղայու յամենանն մայիսի 17. եւ մի ընդ նմին եւ զարգացող սորին. զտէր ազգքսանգր յիշել աղաչեմ այլ եւ վերակացուք տպագրատանս զոր արար անդրեաս կուսակցոն քհնյ եւ զերեցունս, գործավարք սորին զա՛ր սարգիս եւ զերկեակ տը անձատուրսն եւ զմանուկ դպիւրս վերջ»:

92.

ԲԱՌԳԻՐՔ

ԹՈՒՂԹ. 155: — ՄեծՈւթիկն՝ 115X8սմ.: — ԳրՈւթիկն՝ միասին. 19 տող: — Գիր՝ տպագրի նման: — Նիւթ՝ թուղթ նասարակ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լուսանցքները մաշած. առջեւէն պակաս: — ԿԱԶՄ՝ փայտ սնկ կաշի պատեալ:

Մատենան է բառգիրք. էջ 1—17 պարուկական հոմանիշ բառեր, կը սկսի «Թեոան, հաճութիւն», էջ 18—102 «Այս բանք են քերթողականք վասն չափոյ հոմերական աղիցն», էջ 103 է «Նորավարժիցն սակ», բառեր. եւ յետոյ «Բառ Գեղեցանոսի բժշկապետ վասն գեղերոյ» եւ ապա «Բառք գովասանական»:

93.

ՏԱՂԱՐԱՆ

ԹՈՒՂԹ. 91: — ՄեծՈւթիկն՝ 12X8սմ.: — ԳրՈւթիկն՝ միասին. 14—18 տող: — Գիր՝ մանր տպագրի նման: — Նիւթ՝ թուղթ նասարակ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ետեւէն պակաս, կազմէն ելած: — ԿԱԶՄ՝ սնկ նաստ կաշի միայն: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ. Թ. 4ա. ք զըջափործ եղած:

Մատենան է Տաղարան. սրբոց վրայ զանազան տաղեր. ունի նաեւ էջ 70—77 խրատական «Յայսմամբուր սուրբ յարն թաթուլ առաջնորդ կացուց զթումաս աշակերտն իւր վանաց իւրոց եւ իրատ ետ նմա ցայս բանս...» էջ 79—91 պատմութիւն մը «Այր մի էր մեծատուն իշխան ի քաղաք մի...»:

94.

ԳԻՐՔ ՈՐ ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՅ ԿՈՉԻ

ԹՈՒՂԹ. 215: — ՄեծՈւթիկն՝ 15X10.5սմ.: — ԳրՈւթիկն՝ միասին. 24 տող: — Գիր՝ փոքր տպագրի նման: — Նիւթ՝ թուղթ նասարակ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ եզերքները դեղնացած, ջուր տեսած, ետեւէն պակաս: — ԿԱԶՄ՝ խաւարարտ, ետեւի կողմ ինկած: — ՍԿԶՐԱՏՈՂ՝

ՍԿԶՐԱՏՈՂ՝ զլուինները կարմիր թանաքով. պատմութեանց ա տառը կարմիր: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ. էջ 1ք ղատարիկ:

Մատենան է «Գիրք հայելի վարուց» անունն ներքեւ զանազան փոքր պատմութիւններ. ՀԲ գլուխ ինչպէս կը ցուցնէ առջեւն եղած ցանկը. կը վերջանայ կից գլուխ «յաղագս սովորութեան», որ է ըսել 7 գլուխ կը պակսի ետեւէն:

(Վ.Է.Ը.)

Հ. Յ. ԲՕՍՆԱՆ



ՊԱՏՄԱԿԱՆ

ՎՐԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(ՀԱՐԱՆԱԿԱՆ)

Գ.

Հիմա դառնանք ժամանակագրութեան այն մասին որ կը վերաբերի Վրաց թագաւորութեան բուն սկզբնաւորութեանը: Ըսինք թէ ժամանակագրութիւնը 13 տարի ուշ դրած է իւրաքանչիւր իշխանութեան թուականները: Այսպէս հաշուելով դէպի ետ՝ Փառնաւազի գահակալութեան համար կը ստանանք ն. ք. 315 թուականը: Արդ, ասիկա գոնէ միւսին չափ հաւանական է, մանաւանդ որ ն. ք. 302 տարին Պոնտոսի թագաւորութեան հիմնարկութեան թուականն է, եւ արդէն այլուստ գիտենք թէ Պոնտոսի եւ Վրաց թագաւորութիւններն երբեք իրարու հետ շփոթուած են. (Հմմտ. Խոր, Պատմ., Բ. Ը., 172—173. Ժա. 185. Ժգ. 193):

Վրաց աւանդութիւնը կը պատմէ որ Աղբքսանդր Վրաստանի կուսակալ կարգեց Ագոն անուն մէկը. եթէ իրական է այս, թերեւս եղած է Գաւգամելայի ճակատամարտէն անմիջապէս ետքը (ն. ք. 331ին): Աւանդութիւնը զԱգոն կը ներկայացնէ իբրեւ Յոյն մը. բայց Ագոն անունն աւելի Արեւելեան կը հնչէ քան յունական (համեմատէ Ozines անունն առ Յուստիի, Iran. Namenbuch). եւ Ագոնի շինած կուռքերը, Դայիմ՝ եւ Դաւիմ՝ (Ջուան, 21) Վրաց բնիկ աստուածներն ըլլալ կը թուին. (տես Ջուան. 47, 57): Ուստի աւելի հաւանական է որ Ագոն բնիկ Վրացի իշխան մըն էր, եւ գիտենք Աղբքսանդրի քաղաքականութիւնն՝ Արեւելքի համար թէ նա բնիկ ստարապներ կը կարգէր իրեն հպատակող արեւելեան եր-